նը—այս բոլորը երևացող բաներ չեն։ Գթացէք, հայեր, մեր մանուկներին և կրթէք նրանց գէթ մի լեզուով հիմնաւոր կերպով, ապա թէ ոչ հարիւր լեզուներով խօսող երեխան և ոչ մի լեզուով չէ կարող խօսել և տուէք մեր միակ ժանկական թերթին այնքան բաժանորդ, որքան վայել է մեր ժողովրդի թուին։

ՆՈՒՇԻՐՎԱՆ

---

## ԱՂՑՄԻՔ

Մեր յարգոյ աշխատակից Պ. Ս. Շահազիզը ուղարկեց մեզ Նալբանդեանի «Աղցմիքի» տպարանում կորցրած կտորը, որ զետեղում ենք այստեղ.

### Է

### ՈՉ ՀԱՆԻՑ ԱՐՏԱՔՍ

'Ի բուրաստան ծաղկոցիս իջեալ,
Ինձ հանդէպ գայ տիկին գուարթերես,
Բայց թխաթոյր զանձամբ ինչ արկեալ
Լօղիկ ազնիւ, տխուր յոյժ 'ի տես։
«Ողջոյն քեզ, քոյր, տիրուհիդ ողջոյն»...
Այլ Նա առ այս.—Եւ ո՞ իցես դու։
«Ցոյր 'ի դրախտին երգի վարդենւոյն՝
Սոխակին ցանդ մեղեդի աղու»...
Նա դարձեալ, թէ—Ո՛չ գիտեմ զքեզ,
«Ո՛չ զսիրոյ քաջ զերգե՞չ վսեմ».
—Ձիմանամ իսկ, այր դու, զոր ասես,
«Եւ ո՛չ ժմտիս—այո՛, տեսանեմ»...
Ցական քթթել նմա վակժոյժ լեալ՝
Բուռն հարկանեմ զխրոխտ բրգանց...
Եւ ի համբոյր վառ վարդից եկեալ.
Այլ Նա խուսել ճգնի յիմ ձեռաց,
Եւ ընդվզեալ ամբառնայ զձայն,
Եւ ի դարպաս ձգտեալ պալատիգիս՝
Բայց տուժեցա՛ւ... զի իմ առժամայն
Ցից ընդ Ներքին վարեալ ծամելիս...
Զարթուցեալ ի քնոյ
Հրեշտակն զգայ զպատրանս
Ի տակաւ հոսելոյ
Որոյ բնաւից տայ զկեանս։

---